


ԴԵՅՎ ՖՐԻԵՐ



ԼՈՒՍԱՍՏՈՂ



Forlorn (The Morningstar)

Dave Freer

Լուսաստղը

Դեյվ Ֆրիեր

© 2026 Forlorn, Dave Freer

Թարգմանիչ Լիլիթ Մկրտչյան
Երևան, 2026թ.

NovusLiber

Yerevan, 2026

ՅՏԴ 821.111(94)-31 Ֆրիեր
ԳՄԴ 84(82)-44
Ֆ 880

Armenian translation © 2026 Lilit Mkrtchyan

Հայերեն թարգմանություն © 2026 Լիլիթ Մկրտչյան

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սույն գրքի որևէ մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական համակարգերում կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցներով (էլեկտրոնային, մեխանիկական, ձայնագրման, լուսապատճենահանման և այլն) առանց հրատարակչի գրավոր թույլտվության, բացառությամբ տեղեկատվական նպատակներով արվող կարճ մեջբերումների՝ հեղինակի կամ թարգմանչի անվան հստակ նշմամբ:

ISBN 978-9939-9383-9-4 (էլ. հրատ.)

ISBN 978-9939-9383-6-3 (տպագիր)

ISBN 978-9939-9383-6-3



Forlorn (The Morningstar)

Dave Freer

Լուսաստորը

Դեյվ Ֆրիեր

Գիտաֆանտաստիկ արկածային ժանրի վեպ, որը միավորում է լարված սյուժե, ռոմանտիկ սեր, գաղափարական որոնումներ և մարդու բնության սահմանների քննություն:

Գրքում առկա են բնության և էրոտիկ բնույթի նկարագրություններ, ինչպես նաև կոպիտ կամ վիրավորական բառապաշարի կիրառում:

Ներկայացված բոլոր իրադարձություններն ու կերպարները մտացածին են, և որևէ նմանություն իրական մարդկանց կամ իրական իրադարձությունների հետ պատահական է:

Գրքի հայերեն թարգմանությունը կատարվել է 2004 թվականին՝ հեղինակի թույլտվությամբ: Հայերեն հրատարակության վերնագրի փոփոխությունը նույնպես համաձայնեցված է հեղինակի հետ:

Խմբագրական նշում

Սույն հրատարակության թարգմանությունը կատարվել է մեծ ուշադրությամբ և խնամքով՝ ձգտելով հնարավորինս հավատարիմ մնալ բնագրի իմաստին, կառուցվածքին և գաղափարական ընթացքին՝ միաժամանակ պահպանելով հայերենի բնական հնչողությունն ու գրական արժանապատվությունը:

Տերմինաբանական և ոճական լուծումները ընտրվել են գիտակցաբար՝ հաշվի առնելով թե՛ բնագրի ներքին տրամաբանությունը, թե՛ հայերեն գրական ավանդույթը:

Թարգմանության նպատակն է եղել ստեղծել այնպիսի տեքստ, որը հայերենում կընթերցվի բնական և ամբողջական՝ առանց արհեստական «թարգմանվածության» զգացողության:

Միևնույն ժամանակ, ցանկացած թարգմանություն անխուսափելիորեն կրում է թարգմանչի լեզվական մտածողության և մեկնողական ընտրությունների հետքը: Այդ պատճառով «Novus Liber» հրատարակչությունը այս աշխատանքը դիտում է որպես հեղինակային թարգմանություն՝ իրականացված լեզվական և մեկնողական ինքնուրույն մոտեցմամբ:

Ընթերցողներին և հետազոտողներին առաջարկվում է այն դիտարկել որպես թարգմանության հնարավոր տարբերակներից մեկը՝ բաց համեմատության, քննարկման և մեկնությունների համար:

Գրական լեզուն կենդանի համակարգ է, և որևէ հրատարակություն չի կարող հավակնել բացարձակ կատարելության:

Եթե ուշադիր ընթերցողները նկատեն տառասխալներ կամ տեխնիկական վրիպումներ, հրատարակչությունը միայն երախտագիտությամբ կընդունի դրանց վերաբերյալ տեղեկությունները՝ info@novusliber.com հասցեով:

Բովանդակություն

ԳԼՈՒԽ 1	1
ԳԼՈՒԽ 2	39
ԳԼՈՒԽ 3	70
ԳԼՈՒԽ 4	93
ԳԼՈՒԽ 5	114
ԳԼՈՒԽ 6	149
ԳԼՈՒԽ 7	172
ԳԼՈՒԽ 8	210
ԳԼՈՒԽ 9	246
ԳԼՈՒԽ 10	269
ԳԼՈՒԽ 11	300
ԳԼՈՒԽ 12	330
ԳԼՈՒԽ 13	351
ԳԼՈՒԽ 14	377
ԳԼՈՒԽ 15	412
ԳԼՈՒԽ 16	447
ԳԼՈՒԽ 17	480
ԳԼՈՒԽ 18	508
ԳԼՈՒԽ 19	534
Հավելված	567
Ճանաթագրություններ	574

ԳԼՈՒԽ 1

Թինարանա նավահանգիստը՝ իր հարյուրավոր փողոցների ու նրբանցքների խոր ակոսներով, նման էր վաղուց հնացած ու արդեն փտող անճոռնի տոնական տորթի, որը կարծես մի անփորձ խոհարարի ձեռքով զարդարված էր բազմահարկ կառույցների անկանոն շարքերով: Այնպիսի տպավորություն էր, ասես փողոցներն ու անցումները տարեցտարի նեղանում էին՝ խեղդվելով շենքերի առաջին հարկերի երկայնքով հետզհետե կուտակվող աղբի բլուրների մեջ: Մինչև մարդու սրունքները հասնող ծորուն կեղտի ճահճացած ծածկույթից կարելի էր կռահել, որ վերջին երեք հարյուր տարիների ընթացքում աղբը քաղաքից չէր հեռացվել:

Սակայն փակուղում կանգնած տղայի համար դա միևնույնն էր, առավել ևս, որ մի քանի ընթացից նրա մարմինը կարող էր դառնալ այդ ճահճի ևս մի անկենդան մասնիկը: Նա կծկվեց ու ասես ծեփվեց դեպի անտակ երկինք բարձրացող պատի սառը, մամռակալած քարերին: Գիշերային մառախուղի մեջ այրվող քարածխի ու նեխած աղբի գաղջ հոտը փոքրիկ հողմապտույտներով տարածվում էր նրան մոտեցող փողոցային տղաների ոհմակի ցնցոտիավոր մարմինների շուրջը: Նրանց ուրվագծերը մշուշված էին թանձր մառախուղից, իսկ վտիտ մարմիններն ուրվականների տեսք էին ստացել: Ոսկրոտ ձեռքերում ցածր բռնած պողպատյա շեղբերի ցուլքը՝ անողորձաբար մոտենալով, այս անգամ իրական ու անելանելի

վտանգ էր խոստանում: Տղաների գիշատիչ ոհմակը՝ սեղմելով կիսաշրջանը, դանդաղ մոտենում էր նրան:

– Հիմա կմորթենք քեզ, սիրուն տղա՛...

– Հը-հաա՛... Հիմա փորդ կթափենք, քաբլա՛ն... Մեր թաղում ես արածո՞ւմ...

Քեյլինը գիտեր, որ խնդրելն ու աղերսելն անօգուտ էր: Նրանք, միևնույնն է, չէին լսի: Նրանք բոլորն իրենից մեծ էին և դանակներ գործածելու մեջ վաղուց արդեն հմտացած: Նա շոշափեց պարանոցից բարակ շղթայով կախված զարդը և զարդի քարը սեղմեց կրծքին: Քարը միշտ սառն էր, բայց այդ պահին կարծես չոր սառույցի պես անխնա այրում էր կրծքի մաշկը: Նրա անգույն աչքերը արագ պտտվեցին տեսադաշտով՝ փորձելով գնահատել փրկության հնարավորությունները:

Օ՛, Աստվա՛ծ... Մի բան արա՛... Նրանք ավելի են մոտենում...

– Էս ի՞նչ եք գտել Էդտեղ, քաբակեր առնետներ:

Ձայնը խռպոտ էր, հասուն տղամարդու կոկորդից, և հնչեց գինովցած ծուլությամբ:

Ցնցոտիավոր ոհմակի առաջնթացն անմիջապես դադարեց:

– Գործիդ կա՛ց, ոստիկա՛ն, թե առողջությունդ թանկ է քեզ համար:

Փողոցային առնետների ոհմակի առաջնորդը զգույշ էր, բայց հաստատակամ:

– Յա՛հ... Դու դրանց լսեցի՞ր... Առնետներն անհանգստանում են իմ առողջական վիճակով...

Մեկ ուրիշ բամբ ձայն պատասխանեց.

– Ոչի՛նչ, հիմա մենք մի լա՛վ կանհանգստանանք նրանց

առողջական վիճակով... Աչքիս էս սողունները շա՛տ առողջ են երևում, հա-հա-հա...

Պատյանից դուրս եկող պողպատյա շեղքի շառաչ լսվեց:

Քեյլինը գիտեր, որ դա բնավ փրկություն չէր իր համար: Քաղաքի ոստիկանները պաշտպանում են միայն նրանց, ովքեր վճարում են հարկերը: Հոգեառների այդ եղբայրության համար ինքն ընդամենը քաղաքի գարշահոտ փորի տակ սողացող մի լու էր, ինչպես և իրեն ծուղակը գցած փողոցային առնետները, ովքեր այդ պահին հայտնվել էին իր հետ միասին նույն ծուղակի մեջ:

– Մի րոպե սպասի՛ր, Մի՛լ, նախ տեսնենք, թե ի՞նչ որս են բռնել էս հարճորդիները: Գուցե նրանց ավարն իրենցից լավը լինի:

Ձայնը ինչ-որ ռնգային ծույլ երանգ ուներ, որը հատկապես մթության մեջ շեշտում էր խոսողի անթաքույց վավաշանքը: Մթնեցրած լապտերի կափարիչը հետ ընկավ մետաղական սուր զրնգոցով: Լույսը ծորաց փակուղու փոքրիկ հրապարակի վրա: Լույսի շերտի մեջ երևացին չորս վտիտ ցնցոտիավոր ուրվագծեր: Չորսն էլ ֆիզիկապես թերաճ էին ու թերսնված և ակնհայտորեն տասնհինգից մինչև առաջին աղվամազ մորուքի տարիքային շրջանում: Նրանց գոհը, սակայն, ավելի փոքրամարմին էր ու ավելի երիտասարդ:

Լույսն ուղղվեց գոհի վրա.

– Ուո՛ւհ... Էս ի՞նչ սիրունիկն է ավարը, տղե՛րք...

Ռնգային ձայնը տռփանքով ծոր տվեց:

Այստեղ՝ խոր հարավում, սպիտակամորթ մաշկը, կանաչ աչքերն ու կարմրահեր գլուխը հազվադեպ երևույթ էին, ինչպես և այդ ամենից բացի՝ ակնառու արծվակտուց քիթը: Քեյլինին

ուղղված լույսի ալիքը բավարար էր, որպեսզի նա տեսներ
ռնգային ձայնի տիրոջը: Քեյլինի ստամոքսը հասավ կոկորդին:
Պահակախմբի կապիտան Քեմփն էր: Քաղաքում հայտնի էր, որ
Քեմփը բավականություն էր ստանում միայն սադիստական
սեռական հարաբերությունից... և նրա երիտասարդ գոհերի
դիակներն ի վերջո գտնվում էին քաղաքամերձ ճահճուտներում...
բայց շահ տ ավելի ուշ:

– Յայդե, առնետներ, չքվե՛ք Էստեդից: Էս գիշեր ձեր բախտը
բերեց:

Երբ ցնցոտիավոր ոհմակը՝ չսպասելով երկրորդ հրամանի,
ճողոպրեց պահակախմբի ոստիկանների կողքով, Քեյլինը տեսավ,
որ պահակախմբի կապիտանը ցած դրեց սև լապտերը և սկսեց
անհամբերությամբ քանդել շավարի կոճակները:

– Պինդ բռնե՛ք դրան, տղերք: Էս մեկը հաստատ քացի ա
տալու, – ինչ-որ բան նրա ձայնի մեջ մատնում էր, որ նա
ակնկալում էր առավել սուր հաճույք ստանալ հենց այդ
հանգամանքից:

Քեյլինը ապարդյուն պայքարեց մկանուտ բազուկների դեմ,
որոնք աքցանների պես բռնել էին նրան երկու կողմից: Նա
միանգամից կորցրեց ինքնատիրապետումը՝ ասես
ակնթարթորեն խելագարվելով վախից և կես վայրկյանում
հասնելով խուճապի գերագույն աստիճանին: Դա այնպիսի
ամենակուլ խուճապ էր, որ նա նույնիսկ չզգաց կրծքին կախված
զարդի քարի սառցային հպումից մոլեգնած ցավը:

– Ուո՛ւ-հալ-լահ... Էս ի՞նչ էր...– նրան բռնող ձեռքերը կարծես
թուլացան: Քեյլինը առաջ նետվեց ու ազատվեց բազուկների

կապանքից: Հաջորդ շարժումով նա հապշտապ վեր քաշեց արձակված շալվարը: Ինչ էլ որ լիներ, նայելու ժամանակ նա չուներ, պետք էր փախչել, իսկ սրունքներին ընկած շալվարով հեռու չես փախչի: Նա թիկունքում լսեց պատյաններից դուրս եկող շեղբերի շառաչը: Մի պահ վեր նայելով՝ նա անմիջապես գնահատեց, թե որքան անօգուտ էր այդ գործողությունը: Լապտերի լույսի մեջ փակուղու միակ անցումի վրա անսպասելի հայտնված վայրի գոմեշը նույնիսկ ավելի ահռելի ու ահարկու էր երևում՝ իր աժդահա մարմնով լցնելով պատերի միջև ընկած գրեթե ամբողջ տարածությունը: Ծնված օրվանից ապրած լինելով քաղաքային բնակավայրերում, Քեյլինը հազիվ թե կարողանար ասել, թե դա ինչ կենդանի էր, բայց լսելով գազանի որոտածայն մռունչը, տեսնելով նրա սպառնալից ցցված երկար եղջյուրները, նա բացարձակապես վստահ էր, որ գազանը շատ, շատ կատաղած էր:

Գազանին ամենամոտ կանգնած ոստիկանը նույնպես գրեթե ոչինչ չգիտեր ճահճային պառավ գոմեշի կատաղության աստիճանի ու դրա ճամփին հայտնվելու հետևանքների մասին: Եթե նա ծնված լիներ հարյուրավոր մղոններ դեպի հարավ ընկած Վյեհեն գավառի լայնածավալ վայրի ճահճուտներում, որտեղ մի քանի վայրկյան առաջ այդ աժդահա գազանը խաղաղ արածում էր գունատ լուսաբացի անդորրի մեջ, ապա իրեն այդքան ապուշավարի չէր պահի: Բայց այդ գազանին ինչ-որ չափով նման միակ կենդանին, որին նա երբևէ տեսել էր իր կյանքում, պառաված կաթնատու կովն էր, և չաղ ոստիկանը գոմեշի վրա ճիպոտի պես ապարդյուն թափահարեց իր թուրն ու բղավեց.

– Չո՛շ, չո՛շ... Յոռի՛-ահ... Գնա՛ Էստեղից...

Գոմեշի ճոճվող պոզը մեկ ակնթարթում հասավ նրան ու զգվելի խլրտոցով մխրճվեց մարդու մարմնի մեջ՝ մեկ վայրկյանում ծակելով, գրահ ու հանդերձանք, միս ու ոսկոր, և նիզակին ցցած թաց լաթի պես պոզի վրա բարձրացրեց մարդու մարմինը: Ոստիկանի գերմարդկային ճիչն ընդհատվեց նույն անսպասելի արագությամբ, ինչ սկսվել էր, երբ գազանը՝ մարդու ոսկորները ճրթճրթացնելով, պոզի վրա պտտեց նրա մարմինը ու շեշտակի նետեց դեպի պատը: Մարմինը խփվեց պատին ու գնդակի պես հետ թռչելով գլորվեց կատաղած գոմեշի սմբակների տակ:

Միլ անունով ոստիկանը՝ առաջ նետվելով, բռնեց Քեյլինի ձեռքը և նրան հետ քաշելով իր կողմը, վահանի պես պահեց իր առաջ: Դժվար թե շատ օգուտ լիներ նման վահանից՝ երեք տոննա քաշով գազանի դեմ, որը սմբակներով հունցում էր լաթե տիկնիկի նման անշունչ ընկած ոստիկանի մարմինը:

Յետո Քեյլինը լսեց արդեն ծանոթ բարձրաճղինչ, ականջ ծակող սուլոցը: Նա արդեն գիտեր, թե հաջորդն ինչ էր լինելու: Նման բան արդեն երեք անգամ եղել էր իր հետ: Իսկ պահակախմբի ոստիկանները կարծես չէին էլ լսում այդ ձայնը: Տղան խելակորույս առաջ նետվեց՝ իր վտիտ մարմնի ծանրությամբ և ծնոտների ամբողջ ուժով կծեց ոստիկանի բազուկը: Միըն ցավից մոնչաց ու տղային մի կողմ հրեց: Քեյլինը հուսահատորեն նետվեց գետնին: Ոստիկանի ամբողջ կրծքավանդակը և Քեյլինի կարմրահեր բաշից վեր ցցված մի գանգուր նույն վայրկյանին պարզապես գլորշիացան: Նույնը կատարվեց նրանց հետևում գտնվող պատի հսկայական

հատվածի հետ:

Քեյլինը մտադիր չէր սպասել երկրորդ կրակահերթին: Նա արդեն փախչում էր փակուղուց նոր բացված ելքով: Մի հետադարձ հայացք նետելով, նա տեսավ, որ պահակախմբի կապիտանը նույնպես փորձում էր փրկվել՝ ճողոպրելով փակուղու պատի մեջ անսպասելիորեն բացված անցքով: Մարդը, կարծես, մտադրություն չուներ հետապնդելու իրեն: Քեմփը պարզապես փախչում էր կույր խուճապի մեջ:

Քեյլինը մտավ բազմաթիվ կողմնատար անցումների ունեցող մի նեղլիկ փողոց և թաքնվեց աղյուսների բարձր կույտի հետևում: Նրան ոչ մի ոտնաձայն չէր հետապնդում: Մի քանի րոպե շունչը տեղը բերելուց և սրտխփոցը կարգավորելուց հետո, տղան կամացուկ դուրս եկավ իր թաքստոցից ու շարժվեց լրիվ այլ ուղղությամբ: Երբ երկինքը գունատվեց և քաղաքը սկսեց արթնանալ այստեղ-այնտեղ լսվող փոքրիկ ձայներով, նա մազլցեց մի պարիսպի վրա և՛ լարախաղացի պես քայլելով պարիսպի նեղ պատի վրայով, հասավ մոտակա շենքի բարձր աղյուսե պատին: Մտնելով դուրս ցցված ջրհորդանի խոռոչը, նա սկսեց բարձրանալ: Ջրհորդանի խողովակը նրան դուրս բերեց երրորդ հարկի բարձրությամբ շենքը գոտեվորող մի նեղլիկ քիվի վրա: Նա պատին սեղմված կողքանց անցավ քիվի փշրվող աղյուսների վրայով և շրջանցելով շենքի անկյունը, հայտնվեց մի փոքր պատուհանի տակ:

Պատուհանը ճաղեր չուներ, ինչը շատ անսովոր երևույթ էր Թինարանա նավահանգստի համար: Պատուհանը նույնիսկ փակ էլ չէր: Նա եղունգը մտցրեց ժանգոտած մետաղյա փեղկի տակ, և

պատուհանը անձայն բացվեց կամ, առնվազն, պետք է բացվեր: Իզուր չէր Քեյլինը գողացած կես լիտր մեքենայի յուղ լցրել պատուհանի շրջանակի ժանգոտած ծխնիների վրա, բայց կես թիզ բացվելուց հետո փեղկը լավեց: Քեյլինը կանգնած էր հինգ մատնաչափ լայնությամբ քիվի վրա՝ փորձելով հավասարակշռությունը չկորցնել ու դեպի դուրս բացել պատուհանի փեղկը: Նա շշուկով հայհոյեց մի լեզվով, որը լսողի մոտ անսահման զարմանք կառաջացներ տասնհինգամյա տղայի լեզվաբանական գիտելիքների կապակցությամբ, ոչ միայն այն պատճառով, որ նրա ընտրած արտահայտությունը ծայրահեղ անպատշաճ էր, այլ նաև որովհետև այն անպատշաճ էր վաղուց արդեն մեռած մի լեզվով: Երևի, ի պատասխան նման արտառոց աններդաշնակության՝ պատուհանի փեղկը շեշտակի բացվեց, ու երևի արդեն քսաներորդ անգամ տղան հագիվ պահեց հավասարակշռությունը, որպեսզի ցած չգլորվի: Մեկ անգամ արդեն գլորվել էր, և այդ անկումի սարսափը դեռ թարմ էր նրա հիշողության մեջ: Երբ վերջապես ներս սողոսկեց, ամբողջ մարմնով դողում էր: Փեղկն իր հետևից փակելով, նա նստեց պատուհանի նեղ գոգին: Մի քանի վայրկյանից աչքերը վարժվեցին մթությանը: Վերջապես ինչ-որ հանգստություն իջավ նրա վրա, երբ կիսախավարի մեջ իր դիմաց ներթևուճ տեսավ ճաքած լվացարանի ծանոթ ուրվագիծը և, ոտքը դնելով գուճարանակոնքի ջրի տակառիկի վրա, ցած թռավ հատակին:

Սա նավահանգստի ամենաառաջին շենքերից մեկն էր: Եվ այստեղ, ի տարբերություն գրեթե մյուս բոլոր շենքերի, կոյուղին ու ջրամատակարարման համակարգը դեռևս աշխատում էին:

Հասարակական վայրերում գուգարանների հարմարանքները վաղուց կողոպտված էին: Դրանք, ի վերջո, կամ դարձել էին չգործող, պարզապես դեկորատիվ մասեր որևէ հարուստ վաճառականի տանը, կամ մի կերպ հարմարեցվել սովորական դուլյի և անցքով աթոռի տարբերակին: Բայց այս վայրը... այս վայրը վաղուց մոռացության էր մատնված: Իսկ նրանք, ովքեր դեռ հիշում էին, սնահավատ վախով էին խոսում դրա մասին:

Դա քաղաքային գրադարանի շենքն էր, որն արժանացել էր բոլոր գրադարանների ճակատագրին՝ հիմնականում անգրագետ հասարակություններում:

Շորակից հագիվ ծորող թեթևակի ժանգահամ ջրով երկար հագեցնելով ծարավը, Քեյլինը անցավ խիտ խցանված խորդանոցով և մտավ փոքրիկ խոհանոցը, որից օգտվում էին գրադարանավարները: Նա գիտեր, որ մեծ փորձանքի մեջ էր ընկել և որ պետք է լավ մտածեր, թե ինչպես է դուրս գալու ստեղծված իրավիճակից: Սակայն, հայտնվելով համեմատաբար ապահով, ծանոթ միջավայրում, նա ինքն իրեն թույլ տվեց ձեռնամուխ լինել իր առօրյա գործողությունների ծիսակատարությանը: Տարիներ առաջ Քեյլինը հասկացել էր, որ գողերի մեծամասնության ամենամեծ սխալը «սննդի շղթայի» չափազանց բարձր մակարդակի նկատմամբ ձեռք մեկնելն է: Եթե քաղցած ես, մի՛ փորձիր մտով կարկանդակ գողանալ: Դրանց նման բաները լավ են պաշտպանվում, և գողերին շատ շուտ են բռնում: Իսկ ա՛յ, նավահանգստի ցորենի պահեստները... Դրանք նույնիսկ առնետներից ու աղավնիներից չէին պաշտպանվում և միանգամայն մատչելի էին վտիտ մարմնով, աննկատ տղայի

համար: Անշուշտ, այն շիլան, որը նա իր համար եփում էր հավանգի մեջ տրորած ցորենով, այնքան ախորժալի չէր, որքան մտով կարկանդակը, բայց Քեյլինը, ի տարբերություն իր շատ հասակակիցների, թերսնված չէր: Դրանից բացի, ցորենը շատ լավ խայծ էր աղավնիների համար, որոնց նա որսում էր շենքի տանիքում: Քեյլինը նայեց իր շիլայի մնացորդներին ու խոր հոգոց հանեց: Եթե նա չգայթակղվեր համեմունքի մանրավաճառի թափած տոպրակներով, որոնցից հուսով էր մի-մի պտղունց պղպեղ ու դարչին քերել, ապա նրան չէին հայտնաբերի և անցած գիշեր ծուղակը չէին գցի նավահանգստի փակուղում:

Նա զգուշավոր բծախնդրությամբ ամեն ինչ մաքրեց իր հետևից: Ամեն ինչ պետք է բացարձակապես ճիշտ տեղում դրված լինի: Արդեն երեք տարի էր, ինչ նա օգտվում էր այդ խոհանոցից, մինչդեռ խոհանոցի օրինական տերերը նույնիսկ չէին էլ կասկածում դրա մասին: Երբ նրանք խոհանոց մտնեն, փոքրիկ սպիրտայրիչն արդեն լրիվ սառած կլինի, և թարմ ուտելիքի հոտերը լուծված կլինեն երեկվա ապուրների գաղջ հոտի մեջ: Նա երբեմն քիչումիչ դրանցից էլ էր համտեսում... բայց շատ զուսպ և մեծագույն զգուշությամբ:

Նա գնաց լվացվելու. մի սովորություն, որին անառարկելիորեն հետևում էր այն օրից ի վեր, ինչ ավագ գրադարանավարը՝ զգալով Քեյլինի ոչ այնքան նուրբ, փողոցային բուրմունքը, մի ամբողջ ժամ սատկած առնետ էր փնտրում գրապահարանների ստորին դարակներում՝ թաքստոցում ծվարած Քեյլինին կտտելով վախի, անորոշության, ափսոսանքի ու հուսահատության խառը զգացումներով: Գրադարանում այլևս

առնետներ չկային, բայց դրանք նրա կերակրացանկի հիմնական բաղադրամասն էին այն ժամանակներում, երբ նա դեռ նոր էր ապաստանել այդտեղ:

Նրա ուղեղը շարունակ վերադառնում էր նախորդ գիշերվա իրադարձություններին: Կտրիճների, ինչպես իրենք էին իրենց կոչում, փողոցային բանդայում այդ պահին իրեն արդեն մեռած են համարում: Բայց վաղը լուրը կտարածվի: Շատ միամիտ կլինի մտածել, որ քաղաքային պահակախումբը կապեր չունի փողոցային բանդաների հետ: Ուրեմն... բոլոր նրանք, ովքեր կազմակերպված են «օրենքով» (փողոցային բանդաներն ու ոստիկանական պահակախումբը), որսի կելնեն իրեն սպանելու անողոք մտադրությամբ: Նա դեռ չգիտեր, թե պահակախմբի կապիտանը ի՞նչ պատմություն պիտի բստրի իր մարդկանց վրա կատարված գիշերային հարձակումը բացատրելու համար, բայց պատրաստ էր նույնիսկ գրագ գալ, որ այդ պատմությունը ճշմարտությունից շատ հեռու է լինելու:

Այդ մարդն իրեն հանգիստ չի զգա, մինչև անձամբ չտեսնի Քեյլինի անկենդան դին: Իսկ ինչ վերաբերում է մյուս բանդաներին, նրանք չեն հապաղի միանալ մարդաորսին: Ցանկացած ուրիշ բանդա՝ բռնելով իրեն, միայն խաղաղություն պահպանելու համար, պարզապես կհանձնի Կտրիճների դատ ու դատաստանին: Բայց ամենավատն այն էր, որ այդ տարօրինակ սուլող որսորդները կրկին գտել էին իրեն:

Քեյլինը նստեց՝ ձեռքին մի գիրք բռնած, որը դեռ չէր վերջացրել, և փորձեց իր անհանգիստ մտքերը վանել ընթերցանությամբ: Քեյլինը գիտեր, որ կարդալու կարողությամբ

ինքը տարբերվում էր քաղաքի փողոցներում աղբային ավարի համար թափառող մյուս անչափահասներից... Թեև այս անգամ չէր պատկերացնում, թե ընթերցանությունը ինչպես կարող էր օգնել իրեն: Սակայն գիրքն աստիճանաբար կլանեց նրան:

Նա ցնցումով դուրս եկավ ընթերցանության անուրջային վիճակից: Միթե՞ արդեն գրադարանի բացվելու ժամն էր: Այո՛: Անկասկած, ոտնաձայներ էին գալիս աստիճանների կողմից: Գրողը տանի՛... Նույնիսկ չհասցրեց վերջին անգամ զուգարան գնալ: Ստիպված է լինելու նորից օգտվել այն զգվելի շշից: Արագ, բայց անձայն շարժվելով՝ նա հասավ ընթերցասրահի դիմացի պատի մոտ կանգնած կիսաբրզած, հնաոճ ցուցապահարանին: Սկզբում նա դիմացից մի քիչ բարձրացնում էր ցուցապահարանը՝ դրա տակ սողոսկելու համար: Բայց վաղուց արդեն հաջողացրել էր հանել ցուցապահարանի ոտքերին առջևից փակցված տախտակի պտուտակները: Գիշտ է, նա մի քանի քրտնաջան գիշեր էր նվիրել այդ գործին, բայց նրա ջանքերը հատուցվել էին, որովհետև տախտակի հետևի ճեղքով ամենտի իր բույնը սողոսկելու համար ավելի քիչ ժամանակ էր պահանջվում: Այդուհանդերձ, որոշ դժվարությամբ ներս սողոսկելով, նա իր հետևից տեղը քաշեց ճեղքը փակող տախտակը՝ ճիշտ այն պահին, երբ երկու տարեց ու մի քիչ շնչասպառ գրադարանավարները հասան վերին հարկի սանդղահարթակին: Չարմար տեղավորվելով իր բնի մեջ, նա ականջ դրեց խոհանոցում գրադարանավարների բարձրացրած չնգչնոցին:

Նա շոշափեց իր քերծոտված կողերը: Պետք էր մի բան անել այդ տախտակի հետ: Գեղքը կարծես նեղացել էր իր համար:

Մանկությունից պատանեկության անցնելու հետ մեկտեղ ամեն տեսակի նոր հոգսեր էին առաջանում նրա համար: Հետո՝ լսելով գրադարանավարների քննարկած փողոցային նորությունները, նա հասկացավ, որ շատ շուտով տախտակն այլևս մեծ հոգս չի պատճառի իրեն:

– ...Սև մո՞գ, ասում ես, Քաբո՛, երեխա հո չե՞ս... Դու շատ լավ գիտես, որ ոչ մի մոգ ու կախարդ իրականում չի լինում: Նման հեքիաթներին հավատում են միայն ցածր խավի հետամնաց անգրագետները:

– Ինչ ուզում ես մտածի՛ր, Սթանե՛լ: Ձեմայի քոջ աղջիկ Շանդան իր աչքով է տեսել սատկած գոմեշի լեշը: Ասում է, յոթ հոգու հասցրել է սպանել, մինչև կարողացել են նիզակներով դրա վերջը տալ:

– Անհավատալի է... Ի՞նչ է, Շանդան իր հյուրասեր կոնքերը անկողնուց հանեց ու այնքան մնաց ուղիղ կանգնած, որ հասցրեց իր ննջարանից դուրս մի բան տեսնե՞լ: Իսկ ինձ թվում էր, թե նա չափազանց զբաղված է անկողնային հյուրերով, որպեսզի իր մահճակալի գլխի առաստաղից բացի ուրիշ բան տեսնի, – սակայն, չնայած վավաշոտ մեկնաբանություններին, ակնհայտ էր, որ Սթանելը տպավորված էր:

– Նա քեզնից երեսուն տարով ջահել է, ծերո՞ւկ: Եվ եթե անգամ ընդուներ քեզ, ապա մի շաբաթից արդեն փախած կլիներ որևէ նավաստու հետ:

– Եիշտ է, և նա նախընտրեց, որ նավաստիներն իրենք գան իր մոտ: Ինչևէ... Ուրեմն, ասում ես, այո, այսպես կոչված, սև մոգի համար պարզև է խոստացվա՞ծ:

– Էն էլ ի՛նչ պարզև... Պատրիկն անձամբ խոստացել է հինգ հարյուր ոսկի տալ այդ հրեշին բռնողին... Պահակապետի քաջարի կապիտանը, որը հայտնաբերել է մոզին, ինքն է ղեկավարում տուն առ տուն արվող խուզարկությունները: Հրամայված է տղային տեղում սպանել, որպեսզի չհասցնի կիրառել իր սև ուժերը:

Մոռանալով մոզության նկատմամբ իր թերահավատության մասին՝ Սթանելը բացականչեց.

– Իսկ ես կարծում էի, որ մոզերը կախարդանք անելու համար պետք է սև մոմեր վառե՛ն, հնգաթև աստղեր նկարե՛ն... դեհ, գիտես... նորածին երեխաներ զոհաբերեն... և ուրիշ նման բաներ... որպեսզի գործադրեն իրենց չար ուժերը:

– Հա՛հ... Այս մեկն այդ ամենը տարիներ առաջ է արել: Պահակախմբի կապիտանն ասում է, որ մոզը մի անչափահաս աղջկա էր բռնաբարում հենց այն պահին, երբ իրենք ուզում էին բռնել նրան:

– Օ՛ո, ո՛չ... Նողկալի հրեշի մեկը... Թո՛ղ այդ տականքին դանդաղ մահապատժի ենթարկեն:

– Նրան բռնելն այնքան էլ հեշտ չի լինի, ասեմ քեզ: Նա իր համար ճանապարհ է բացել իր սատանայական ուժի ճառագայթներով՝ վեց պատ ու երեք մարդու կիսով չափ գոլորշիացնելով: Նման հրեշին պետք է սպանել նույն ընկերին, տեղնուտեղը, հենց որ տեսնես նրան, նույնիսկ մինչև ինքը կհասցնի տեսնել քեզ:

– Դու քո մասին խոսի՛ր... Եթե ես նրան հանկարծ տեսնեմ, գլուխս կառնեմ ու լեղապատառ կփախչեմ: Գոնե պատմո՛ւմ են, թե ինչ տեսք ունի այդ սատանան:

Յետգիտտե սառցակալող վերջույթներով Քեյլինը լսեց իր արտաքինի զարմանալիորեն ճշգրիտ նկարագրությունը:

...Ա՛խ, այդ հրեշի ծնունդ, տակա՛նք կապիտան Քեմփը... ՉԷ՞ր կարող, ինչ է, դրանում էլ սուտ ասել...

– Չեմ հասկանում, սակայն, թե ինչպես է ստացվել, որ այդ մոզը պահակախմբի կապիտանին էլ չի փոշիացրել:

– Պահակախմբի կապիտան Քեմփը շատ բարեպաշտ մարդ է: Նա հավատացած է, որ Աստված պահպանել է իրեն սատանայական չար ուժերից...

Չրույցը աստիճաններով դեպի ցած հեռացավ և ի վերջո մարեց:

Քեյլինը՝ ձեռքերով դեմքը ծածկած, լուռ նստած էր բրգածև պահարանի մեջ իր թաքստոցում:

Սուրբ Տիրամայր... Էլ ո՛վ ասես հիմա չի մասնակցի այդ հալածական մարդաորսին... Բանդաները հաստատ արդեն սկսել են փնտրել իրեն... Ամեն մի հասարակ քաղաքացի կփորձի տեղնուտեղը սպանել իրեն, հենց որ տեսնի: Քեմփը դռնեդուռ ընկած խուզարկություններ է անում իրեն գտնելու համար, և այդ... սուլող որսորդները... իսկ Պատրիկի խոստացած պարգևը... Այդ մեկը նրա համար, սակայն, բացարձակապես անհասկանալի էր: Թինարանա նավահանգստի քաղաքացիները շատ լավ գիտեին, որ այդ շուն-շան որդի Պատրիկին ոչինչ չէր կարող ստիպել բաժանվել այն ոսկիներից, որոնք նա մեծագույն նախանձախնդրությամբ հավաքում էր իր բոլոր հպատակներից, այդ թվում նաև մարմնավաճառներից, մուրացկաններից ու գողերից: Եվ բոլոր ասեկոսներն ու փաստերը համադրելով,

կարելի էր ասել, որ, գրադարանավարների պատկերացրած սև մագիան շատ անմեղ զբաղմունք էր՝ համեմատած այն ամենի հետ, ինչ կատարվում էր Պատրիկի պալատի նկուղներում:

Քաղաքում կային մի քանիսը, ովքեր ճանաչում էին Քեյլինին, սակայն նա երբեք ոչ մեկին այնքան չէր վստահել, որպեսզի պատմեր իր թաքստոցի մասին: Այստեղ նա առայժմ անվտանգության մեջ էր, բայց եթե հանկարծ համարձակվեր քիթը դուրս հանել իր բնից...

Փողոցներում միշտ էլ կլինեն մի քանի գույգ աչալուրջ աչքեր: Վաղ թե ուշ մեկնումեկը կտեսնի ու կճանաչի իրեն, և որսը կվերսկսվի: Ինքը չի էլ հասցնի նորից թաքնվել: Հին քաղաքում կգտնվեն առնվազն հազար տղամարդ ու կին, ովքեր նույնիսկ մեկ ոսկե մետաղադրամի համար կկտրեն իր կոկորդը, ուր մնաց թե... հինգ հարյուրի:

Նա փորձեց կրկին կենտրոնանալ իր գրքի վրա՝ աշխատելով կարդալ ցուցապահարանի պատերի մեջ իր բացած անցքերից ընկնող լույսի տակ: Չէր ստացվում: Նրան չէր հաջողվում ուշադրությունը շեղել Քեմփի նենգությունից: Ատելությունը մոլեգնում էր հոգու մեջ: Նա երբեք ոչ մեկին չէր սպանել, բայց եթե նրան հաջողվեր այդ մարդուն մի տեղ դեմառդեմ հանդիպել... Ինչևէ, երազանքներին տրվելը միանգամայն անիմաստ էր:

Նա պետք է դուրս գար այդտեղից, աշխատեր ողջ մնալ, իսկ հետո, մի օր գուցե վերադառնար և սուսուփուս վրեժխնդիր լիներ:

Քեյլինը շատ քիչ բան գիտեր նավահանգստի պարիսպներից դուրս գտնվող աշխարհի մասին: Նա թինարանա եկել էր՝ փախչելով հիշողության մեջ աղուտ մեկ ուրիշ քաղաքից, երբ

ընդամենը յոթ տարեկան էր: Նա հիշում էր, ինչպես մոր հետ միասին նավ նստեցին: Հիշում էր իր ապշահար ու անհարմար զգացումը, երբ դիտում էր, թե ինչպես էր մայրը «վճարում» նավապետի օգնականին, որպեսզի նա իրենց նավից ցած իջեցնի: Հիշում էր դրան հաջորդած մռայլ տարիները, երբ մոր կախվածությունը ավկոհոլից ու թմրանյութերից հետզհետե ավելի ու ավելի էր խորանում, հիշում էր, թե ինչպես իր անհանգստությունն ու ընդվզումը աստիճանաբար տեղի տվեցին հանդուրժողականությանը և համակերպմանը: Հիշողությունը ավելի հեռու գնաց մինչև այն աղոտ պատկերները, որոնք վերաբերում էին Թինարանա նավահանգիստ գալուց առաջ իր վաղ մանկության տարիներին: Հիշում էր քարավանի պահակախմբի սերժանտին, բայց մարդու դեմքը հիշել չէր կարողանում:

Տղան չկարողացավ զսպել ականա ցնցումը: Ուղեղը թույլ չէր տալիս, որ նա հիշեր մարդու դեմքը: Դա առաջին անգամն էր, որ նա լսեց այդ սուլող ծորուն ձայնը:

Քարավանի պահակախմբի սերժանտը բավականին բարի մարդ էր... երբ խնած չէր: Նա հորդորում էր Քեյլինի մորը, որպեսզի նա տղային կարդալ սովորեցնի, և բոլորի մոտ հպարտանում էր իր խորթ որդու խելքով ու տաղանդներով: Նա նույնիսկ թրամարտի դասեր էր սկսել Քեյլինի հետ, փորձում էր նրան լողալ սովորեցնել: Իսկ նրա երկար, զարմանահրաշ պատմությունները՝ հեռավոր երկրների մասին, ժամերով հմայում էին տղայի ուշադրությունը և խթանում նրա երևակայությունը: Եթե միայն Քեյլինը կարողանար հիշողության խորքերից պեղել այդ

պատմությունները... Բայց դրանց մեծ մասը կորչում էր վաղ մանկության տարիների հիշողության մշուշի մեջ... Սակայն նա շատ լավ էր հիշում, թե ինչպես էր այդ մարդը կատաղած ու անողոք գազան դառնում, երբ հարբում էր:

Նա ծեծում էր Քեյլինի մորը, ապտակում, ստորացնում, պռոնիկ էր անվանում, և նույնիսկ դրանից էլ վատ... Եհյտ է, խեղճ կինը ուրիշ ընտրություն էլ չուներ նրա մահից հետո, բայց այն ժամանակ, երբ մարդը դեռ ողջ էր, դա այդպես չէր: Քեյլինը նույնիսկ չգիտեր էլ, թե դա ինչ էր նշանակում: Նա ծեծում էր նաև Քեյլինին: Դա դեռ տանելի էր: Առաջին անգամ այդ սուլոցը լսեց, երբ խորթ հայրը փորձում էր իրենից խլել իր շղթայի զարդը: Սկզբում մայրը նետվեց Քեյլինին օգնության՝ ձկնավաճառ կնոջ պես կոկորդաձայն ճչալով և իր թույլ բռունցքներով ապարդյուն փորձելով կանգնեցնել անկառավարելի հարբած գազանին: Քեյլինը հիշում էր իր սեփական վախն ու բարկությունը և զարդի քարի սառնությունը:

Դա ի՞ր զարդն էր: Դա միակ բանն էր, ինչ հասել էր իրեն իր հորից, իր իսկական հորից: Ոչ ո՛ր... ոչ ո՛ր իրավունք չուներ խլել այն իրենից: Նա իր մանկական բռունցքի ամբողջ ուժով կառչել էր մուգ քարով զարդից: Նրա խորթ հայրը կարող էր ունենալ աշխարհի մյուս բոլոր զարդերը, բայց միայն ոչ այդ մեկը: Նա հիշում էր, ինչպես, կարծես մոզական ուժով, չգիտես որտեղից, հանկարծ հայտնվեց մանկական բոժոժավոր խաղալիքներ հիշեցնող զարդերով ու գունավոր քարերով լի սկուտեղը: Հիշում էր, ինչպես ինքը վախեցած սողալով թաքստոց էր փնտրում, և ինչպես իր ականջների մեջ առաջին անգամ զրնգաց այդ ծորուն